

# ԱՊԱԳԻՆՅ

ԽՊ. ՏԱՐԻ ԹԻՒ 2415 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023  
• VOL. XLIII, NO 2415 • 18 DECEMBRE 2023 • MONDAY, 18 DECEMBER 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts\* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

## ԳԱՆԱՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՏՐԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Հայաստան-Ատրպեյճան միացեալ յայտարարութենէն ետք կը նկատենք՝ որ եղան ողջունելի արձագանգներ գանազան երկիրներու եւ համաշխարհային կազմակերպութիւններու ղեկավարներուն կողմէ, որոնց կարգին է՝ Նաեւ Գանատայի արտաքին գործոց նախարար Մելանի ժոլին, երբ ան ողջունած է Հայաստանի եւ Ատրպեյճանի միացեալ յայտարարութիւնը՝ խրախուսելով երկխօսութիւնն ու բարի կամքի դրսեւորումները, ինչպէս նաեւ երկու երկիրներու միջեւ վըստահութեան մթնոլորտը խորացնելու ուղղուած ջանքերը:



«Գանատան կ'ողջունէ երկու ատրպեյճանցի եւ 32 հայ զինուորներու ազատ արձակումը եւ դրական կը գնահատէ այն աջակցութիւնը, որ երկիրները միջազգային ատեաններու մէջ ցուցաբերած են իրարու նկատմամբ:

«Մենք քաղաքական երկխօսութեան այս աննախադէպ բացումը կ'ընդունինք՝ իբրեւ երկու երկիրներուն միջեւ ընթացող խաղաղ հոլովոյթին ուղղուած քայլ: Մենք կ'ողջունենք Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւին՝ շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման ուղղուած միացեալ ջանքերուն համար:

«Գանատան կ'աջակցի նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի բանակցային քաղաքական լուծման՝ հիմնուած չէլ-սինքեան սկզբունքներուն վրայ եւ կը խրախուսէ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ վստահութեան ամրապնդման հետագայ որոշակի քայլերը: Գանատան կը խրախուսէ կողմերուն միջեւ երկխօսութեան շարունակութիւնը եւ հաւատարիմ կը մնայ Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան ու կայունութեան աջակցելուն», նշուած է Գանատայի արտաքին գործոց նախարարութեան հրապարակած մամուլի հաղորդագրութեան մէջ:

## ՀԱՅ 32 ԳԵՐԻՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ



Չորեքշաբթի՝ 13 Դեկտեմբեր 2023-ին, Հայկական-ատրպեյճանական սահմանին վրայ տեղի ունեցաւ գերիներու փոխանակում: Ատրպեյճան Հայկական կողմին յանձնեց 32 Հայ զինուորներ, իսկ Հայաստան յանձնեց 2 ատրպեյճանցիներ:

«Արմէնփրէս»-ի համաձայն, այս մասին յայտնած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը յիշելով, որ 32 գերիները կը գտնուին Հայկական հողի վրայ եւ այժմ կ'ենթարկուին բժշկական ստուգման, որմէ ետք անոնք պիտի միանան իրենց հարազատներուն:

Ըստ հայաստանցի իրաւապաշտպաններուն, այժմ Պաքուի մէջ կը պահուին 23 հայեր, որոնց շարքին Արցախի նախկին ղեկավարները:

Աւարտին յիշենք, որ Ատրպեյճան ազատ չարձակեց լիբանանահայ Վիգէն Էօլճեքեանը, հակառակ անոր որ գերիներու փոխանակման նախնական ցուցակին մէջ կար Վիգէն Էօլճեքեանի անունը:

## 150 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ԱԼԻԵՒԵՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆՆ ՈՒ ԲՈԼՈՐ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ԿԱԼԱՆԱԴՐՈՒԹՅՆԵՐԸ

Աւելի քան 150 միջազգային մարդասիրական, քաղաքական գործիչ եւ գործարար պահանջած են ազատ արձակել Ռուբեն Վարդանեանն ու միւսները:

«Վառելիքի, դեղորայքի եւ պարենամթերքի մատակարարման ապօրինի արգելքէն ետք, որ տեւեց ինը ամիս, Ատրպեյճանը Սեպտեմբեր 19-ին սկսաւ արհիւնալի ռազմական գործողութիւն եւ ներխուժեց Լեռնային Ղարաբաղ: Այս գործողութիւններուն հետեւանքները հարիւրաւոր սպաննուածներ, հազարաւոր վիրաւորներ եւ գրեթէ 120,000 մարդոց՝ փաստօրէն Արցախի ողջ հայ բնակչութեան բռնի տեղահանումն էին: Համաշխարհային հանրային կարծիքով՝ ատիկա հաւասարազօր է ցեղական զտումներու:



Իրաւապաշտպան կազմակերպութիւնները Ատրպեյճանի գործողութիւնները անուանած են ցեղասպանութիւն:

Յայտնի հայ բարերար եւ մարդասիրական գործիչ Արցախի նախկին պետ Նախարար Ռուբեն Վարդանեանը ապօրինի բերման ենթարկուած է, երբ ան եւ այլ քաղաքացիներ կը մեկնէին Հայաստան: Անոր ձերբակալութիւնը յատկապէս մտահոգիչ է, քանի որ Արցախին միջազգային աջակցութիւն ներգրաւելու անոր ջանքերը Վարդանեանը դարձուցած են Պաքուի կառավարութեան թիրախը:

Ի թիւս այլոց՝ հանրապետութեան երեք նախկին նախագահներ՝ Արայիկ Յարութիւնեանը, Բակո Սահակեանն ու Արկաղի Ղուկասեանը եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ՝ Դաւիթ Բաբայեանը, Լեւոն Մնացականեանը, Դաւիթ Իշխանեանը եւ Դաւիթ Մանուկեանը: Շատ այլ հայեր դեռ կը պահուին ապօրինի կերպով: Այս մարդոց առողջութեան եւ ինքնազգացողութեան մասին առկայ ծայրայեղ սահմանափակ տեղեկատուութիւնը տագնապալի է...

Անոնք բոլորը կալանաւորուած են ներպետական եւ միջազգային իրաւունքի ակնյայտ խախտումով, ներառեալ ՄԱԿ-ի համաձայնագիրն ու Մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւրոպական համաձայնագիրը, որուն միացած է նաեւ Ատրպեյճանը...

Ամէն օր կարելի է բանտարկեալներու կեանքին համար. Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ ցանկացած խաղաղ համաձայնագիր պետք է պայման ներառէ անոնց ազատ արձակման համար:

Մենք կոչ կ'ընենք նախագահ Իլհամ Ալիեւին անյապաղ ազատ արձակելու նշուած ապօրինի ձերբակալուած բոլոր անձերը», - նշուած է յայտարարութեան մէջ:

## ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



Արցախի Հանրապետութեան Անկախութեան հանրաքուէին առնչութեամբ, 10 Դեկտեմբերին Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի պատգամաւորները Արցախի Հանրապետութեան Անկախութեան հանրաքուէի, մարդու հիմնարար իրաւունքներու եւ ցեղասպանութեան կանխարգիլման միջազգային օրուան առիթով այցելած են Եռաբլուր պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու Արցախի ազգային- ազատագրական պայքարի ճանապարհին նահատակուած հայորդիներու շիրիմներուն:

Օրուան խորհուրդին շուրջ ԱՀ ԱԺ-ը հանդէս եկած է հետեւեալ յայտարարութեամբ .  
«Արցախի ազգային – ազատագրական պայքարի պատմութեան մէջ ինքնորոշման և ժողովրդավարական սկզբունքների հիման վրայ Հանրապետութեան կայացման առաւելու 1991 թուականի Անկախութեան հանրաքուէն է: 1991 թուականի Անկախութեան  
Շար. - էջ 9

# ՄԵՐ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԶԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՒՐ ՈՒ ՆԻԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՍԲ

## ՅԱԿՈԲ ՄԻՏՏԻՔԵԱՆ

Երոպական միջպետական յարաբերություններու մէջ քիչ պատահող միջադէպ մը տեղի ունեցաւ անցեալ շաբաթ Լոնտոնի մէջ. Մեծ Բրիտանիոյ վարչապետ Ռիշի Սունսաքը ջնջեց Յունաստանի իր պաշտօնակից Քիրիաքոս Միցոթաքիսի հետ նախապէս պայմանաւորուած հանդիպումը, որուն ընթացքին երկու վարչապետները պիտի խորհրդակցէին Կազայի շուրջ ծաւալող իրադարձութիւններուն, ռուս-ուքրանական պատերազմի հետեւանքներուն, ինչպէս նաեւ տարածքաշրջանի «տաք» կետերէն դէպի Եւրոպա գաղթականներու նոր ալիքը դիմագրաւելու վերաբերող հարցերու շուրջ:


Շուտով պարզուեցաւ ընդամենը 45 րոպէ տեւելիք հանդիպումին ջնջուելուն պատճառը: Տաունինկ Սթրիթի բացատրութեամբ՝ հանդիպումին օրակարգը կազմելու ժամանակ յունական կողմը համաձայնած է անգլիական կողմի առաջարկին՝ չընդգրկելու Պարթենոնի նշանաւոր արձաններու վերադարձի հարցը, մինչդէռ նախորդ օրը վարչապետ Միցոթաքիսը BBC-ի լրագրողներուն տուած իր ճեպագրոյցին յայտարարել էր, որ ինչ յունական այդ արձաններուն վերադարձի խնդիրը պիտի արծարծուի նախատեսուած հանդիպումին ընթացքին:

Չուշացաւ Միցոթաքիսի խիստ ջղային հերքումը. ինք այդ հարցը չարծարծելու խոստում չէ տուած: Աւելին՝ Յունաստանի վարչապետը, յայտնապէս վիրաւորուած բանակցութեան ջնջումէն, վախկոտ (coward) կոչեց Սունսաքը եւ շատ պատկերաւոր բացատրութիւն տուաւ. խընդրոյ առարկայ արձանախումբին մէկ մասը Լոնտոնի Բրիտանական եւ միւս մասը Աթէնքի Աքրոպոլիսի թանգարաններուն միջեւ կիսելու իրողութեան: «Ատիկա նման է, ըսաւ ան, Մոնա Լիզայի պատկերը երկու մասի բաժնելուն»:

Ընթերցողը անելի իրազեկ դարձնելու համար արձանագրենք, որ Պարթենոնեան արձանախումբը, քանդակած Ք.ա. 5-րդ դարուն, անբաժանելի մասը կը կազմէ հին յունական շքեղ քաղաքակրթութեան: Անբաժանելի՝ նաեւ ֆիզիքական առումով: 75 մետր երկարութեամբ այդ արձանախումբը, ներառեալ 17 առանձին արձանները, ատենին ներքանդակուած եղած են Պարթենոնեան տաճարին մէջ: 1832-ին է, որ Մեծ Բրիտանիոյ յատենի վարչապետ Էլձինը (Elgin), այդ ժամանակ թրքական տիրապետութեան տակ գտնուող Աթէնքի թուրք իշխանութեան հետ սակարկութեան մէջ մտնելով, արձանախումբը քանդել-պոկել տալով փոխադրել տուած է Լոնտոն, իր կողպուտը «արդարացնելով» այն անամօթ բացատրութեամբ, թէ այդ գլուխ-գործոցները Բրիտանական թանգարանին կը վայելեն...

Անշուշտ առաջին անգամը չէ, որ Յունաստանի կառավարութիւնը կը պահանջէ արձանախումբին վերադարձը: Եւ ոչ միայն կառավարութիւնը: Վարչապետ Միցոթաքիսը ճշմարիտ էր, երբ, մերժել է ետք Սունսաքի փոխարէն փոխվարչապետին հետ հանդիպելու վիրաւորական առաջարկը, յայտարարեց՝ արձանախումբի վերադարձի պահանջատէրը ոչ թէ ինք է միայն, այլեւ՝ Յունաստանի բոլոր՝ 11 միլիոն քաղաքացիները:

Օրինակելի եւ ընդօրինակելի պահանջատիրութիւն մեզի՝ մեր ժողովուրդին ու պետութեան համար: Աշխարհի բազմաթիւ թանգարաններու մէջ, ներառեալ նոյն՝ Բրիտանական թանգարանը, հայկական քաղաքակրթութեան որքան նմոյշներ ու վկայութիւններ կան, ցուցադրուած կամ ոչ, որոնք եղծուած կամ անեղծ կը պահպանուին կամ կ'իրացուին, շահադիտական կամ քաղաքական նկատառումներով: Արձաններ, քանդակներ, ոսկեդրամներ, ձեռագիրներ, մանրանկարներ, գորգեր, կարպետներ, ասեղնագործ դիպակներ, նրբահիւս գարդեր ձեռարուեստի ոսկեայ, արծաթեայ ու պրոնզե գործեր, որոնցմէ շատ շատերն ալ կը գտնուին անհատներու ձեռքը, ենթակայ՝ մութ, ստուերային առետուրի ու



խաբէութեանց: Երբեմն կը դիտենք զանոնք աշխարհի մեծ ցուցասարահներուն մէջ ու կը հպարտանանք, առանց մենք մեզ տէրը զգալու անոնց, եթէ ոչ իրաւական, գոնէ բարոյական իմաստով: Մինչդէռ անոնք մասն են դարձնում ընթացքին մեր ժողովուրդին ստեղծած քաղաքակրթութեան, այսինքն՝ մեր ինքնութեան:

Պահանջատիրութիւն բառը սխալ, անելի ճիշդ՝ թերի ըմբռնուած է շատերու կողմէ: Այդ բառին երկրորդ բաղադրիչը՝ տէր, իրաւական կամ բարոյական իմաստով, յաճախ անտեսուած է մեր կողմէ նոյնիսկ ճարտարապետական ու քարեղէն կոթողներու պարագային: Մինչդէռ, ինչպէս բանաձեւուած է Հարուրտի համալսարանի Արեւստի եւ ճարտարապետութեան պատմութեան անխնջ դասախօս, փրոֆեսոր Քրիստինա Մարանչիի կողմէ, այդ կոթողներուն կործանումը համազօր է ոչ միայն մշակոյթի, այլ նաեւ ժողովուրդի ոչնչացումին, ցեղասպանութեան: Փրոֆ. Մարանչին իր հերթին կը վկայակոչէ արուեստի պատմաբան Պերրի Ֆլուտի (Barry Flood) խօսքը, որ Ատրպէյճանի կողմէ հայկական մշակութային ժառանգութեան՝ արխիւային փաստաթուղթերու, արուեստի գործերու եւ ճարտարապետական յուշարձաններու ոչնչացումը կը համարէ զանոնք ստեղծած ժողովուրդին անհետք մոռացումը:

Եւ միթէ այդ չէր Ջուլայի (Նախիջեւան) հայոց գերեզմանատան քանդումին նպատակը: Միթէ այդ չէր եւ չէ՛ նպատակը ազերիներու եղբայր թուրքերուն, յանձին թուրք պետութեան, որ անելի քան 100 տարիէ ի վեր կը ոչնչացնէ Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ ճարտարապետական մեծ ու փոքր յուշարձանները, կողոպուտի եւ առուծախի առարկայ կը դարձնէ արուեստի ու մշակոյթի մեր ժառանգած գործերը:

Իսկ հաւաքականօրէն ինչ ըրած ենք եւ ինչ կ'ընենք մենք, ինչ ըրած են եւ ինչ կ'ընեն յաջորդական մեր կառավարութիւնները: Ոչինչ, գրեթէ ոչինչ: Քանզի մենք մեզ տէր չենք զգար մեր նախահայրերու ժառանգութեան: Մինչդէռ շարունակ կը պողանք մեր պահանջատէր ըլլալու մասին, սակայն առանց խորութեամբ հասկնալու, թէ ինչ բանի տէր ենք մենք, մինչդէռ պահանջողը տէր պէտք է ըլլայ ամէն բանէ առաջ:

Շուտով եւ դարձեալ դէմ յանդիման պիտի գանք նոյն եւ նման հարցերուն մեր լքած-լքուած Արցախի մէջ, ուր արդէն թուրք-ազերիական վանտալիզմը կ'ոչնչացնէ հայկական ամէն ինչ՝ սկսելով եկեղեցիներու զմբէթներէն, խաչերէն, սուրբ սեղաններէն մինչեւ թանգարաններ:

Պիտի կարողանանք մեզի ճակատագրակից յոյներուն նման Միցոթաքիս մը ունենալ, որ տէր զգայ ինքզինք եւ կարելու հանդիպումներէ առաջ, ընթացքին կամ յետոյ իր ժողովուրդի ժառանգութեան վերադարձի պահանջը դէմ սեղանին, այլապէս՝ մերժէ բանակցի:

Երեւան

### ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՂԱՏԱԽԱԶ. «ՊԱԶՈՒԻ ՄԵՋ ՊԱՅՌՈՒՂ ԱՐՑԱԽԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՎ ՊԻՏԻ ՍՏԵՂՏՈՒԻ ՅԱՏՈՒԿ ԸՆՆՉԱԿԱՆ ԽՈՒՄԲ»

Պաքուի մէջ պահուող Արցախի ղեկավարութեան գործով պիտի ստեղծուի յատուկ քննչական խումբ: Այս մասին ըսած է Ատրպէյճանի գլխաւոր դատախազ Կեամրան Ալիեւ:

«Բոլոր քննչական գործողութիւնները պիտի իրականացուին Ատրպէյճանի օրէնսդրութեան եւ միջազգային համաձայնութիւններուն համապատասխան:

Ատրպէյճանի ժողովուրդը ամբողջութեամբ պիտի տեղեկացուի այս հետաքննութեան ընթացքին եւ անոր արդիւնքներուն մասին: Մենք ատիկա կ'ապահովենք:

Նախաքննութիւնը ասարտելէն վերջ գործը պիտի ուղարկուի դատարան», ըսած է ան:

**ԱԳԱԳԷՅ**  
Շաբաթաթերթ

**ABAKA**

**Hebdomadaire Arménien**  
Armenian Weekly ISSN 0382-9251

*Publié par /Published by*  
**Le Centre de Publication Tékéyan**  
825 rue Manoogian, Saint-Laurent,  
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162  
e-mail: [abaka@bellnet.ca](mailto:abaka@bellnet.ca)  
[www.tekeyanmontreal.ca](http://www.tekeyanmontreal.ca)

**Պատասխանատու խմբագիր՝  
ՄԻՏՏԻՍ ՂԱԳԱՍԵԱՆ**

**Ծանուցումներու  
նուիրատուութիւններու եւ  
գրասենեակի պատասխանատու՝  
ՍԱԼԲԻ ՄՍՐԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝  
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ**

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
<b>Dépôt légal: Bibliothèque du Québec</b>
PM40015549R10945
TPS/GST – R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada  
Funded by the Government of Canada

**Canada**

# Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ ԵՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ 53-ՐԴ ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի՝ 3 Դեկտեմբեր 2023-ին, Սբ. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցին բոլորեց իր գնման, օծման եւ անուանակոչումի 53-րդ ամեակները:

Այս ուրախ առիթով՝ թեմիս բարեխնամ առաջնորդը, Գերշ. Տէր Աբգար Եպս. Յովակիմեան եկեղեցոյս հանդիսաւոր Պատարագը մատուցեց, օգնութեամբ Տէր Յովսէփ Յարութիւնեանի եւ սարկաւագաց ու դպրաց դասի, եւ օրուան իմաստաւից քարոզը փոխանցեց: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնէն ներկայ էր Գերշ. Տէր Արարատ Եպս. Գալթաթեանը, որու ներկայութիւնը հոգեւոր փայլք մը եւս ւաւելցուց սոյն առիթին:

Յետ արարողութեանց, յատուկ հոգեհանգրստեան պաշտօն կատարուեցաւ եկեղեցիս ծառայած բոլոր նախկին հոգեւորականաց, նուիրատուներու եւ կամաւորներու հոգիներուն համար:

Եկեղեցական արարողութենէն ետք, ծովխը հրաւիրուած էր եկեղեցոյս Մարի Մանուկեան սրահը, յաւոր պատշաճի տօնելու համար եկեղեցոյս 53-րդ ամեակը:



Սրահը զարդարուած էր գունազեղ լոյսերով ու սեղանները՝ կարմիր դշխուիներով (poisettias), տօնական մթնոլորտ մը ստեղծելով առաջին իսկ ակնթարթէն:

Բացման խօսքով հանդէս եկաւ եկեղեցոյ ծխական խորհուրդի ատենադպրոհի՝ տիկ. Սիլվա Ամատունի Թոգաթեանը, որ բարի գալուստ մաղթեց բոլորին ու հակիրճ ձեռով եկեղեցոյ ներկայի կառոյցի 1960-ին գնման մասին անդրադարձաւ: Ան յիշեցուց, թէ Հայ Առաքելական Էջմիածնական թեմի պատկանող եկեղեցին Մոնթրէալահայ գաղութին կը ծառայէր 1940-ականներէն ի վեր, իսկ 1957-ին կը կատարուէր անոր պետական արձանագրումը: Հետեւաբար, գաղութիս առաջին հայկական եկեղեցին ըլլալով՝ այսօր կը տօնէինք նաեւ անոր հիմնադրման 66-րդ ամեակը:

Կէսօրուայ ճաշի մատուցումը, համաշխարհային ուտեստներու թեմայով էր՝ ուր ներկաները առիթունեցան այցելելու տարբեր երկիրներ, ու համատե-



սելու զանազան խոհանոցներ, ինչպէս Հայկականը, Իտալականը, Յունականն ու Միջին Արեւելեան, Լիբանանեանը: Այս “ճամբորդութեան” կըն-



կերակցել նաեւ հաճելի եւ զանազան մեղեդիներով՝ վարպետ ջութակահարը:

Յայտագիրը սկսաւ՝ եկեղեցոյս Թատերականի խմբակէն քանի մը պատանիներու խմբային ասմունքով՝ որոնք ներկայացուցին Յովհաննէս Թումանեանի Հին Օրհնութիւնը, անոր մահուան հարիւր ամեակի առթիւ: Նոյնպէս՝ եկեղեցոյ կամաւոր աշխատող անդամներէն՝ տաղանդաւոր դաշնակահարուհի Զինա Վարոսեանի աշակերտներէն երկուքը նուագեցին երկութեան դաշնամուրի կտորներ: Յիշենք որ Տիկ. Վարոսեան կը վարէ եկեղեցոյս Կիրակնօրեայ վարժարանի դաշնամուրի դասընթացքները:



Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարը ըլլալով Առաջնորդանիստ՝ իբր անակնկալ՝ տեսահոլովակի միջոցաւ ներկայացուցեցաւ թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Տէր Աբգար Եպս. Յովակիմեանի



կենսագրականն ու անոր նախաձեռնած աշխատանքներն ու ձեռքբերումները մանաւանդ՝ Գաւաթահայ թեմին համար:

Յաջորդաբար խօսք առին գաղութիս զանազան քոյր միութիւններու ներկայացուցիչները, ընդգծելով եկեղեցոյ կարեւոր դերը գաղութիս մէջ, եւ մասնատարաբար իրենց հաստատութեան ներդր-

ումները ի փառս Հայ Առաքելական Եկեղեցոյ բարգաւաճման:



Եկեղեցոյս Ծխական Խորհուրդի ատենապետուհի տիկ. Ատրինէ Աղազարեան, իր սրտի խօսքը փոխանցելէ եւ շնորհակալութիւն յայտնելէ ետք յատկապէս՝ օրուան Ծխական Խորհուրդին եւ Տիկնանց Յանձնախումբին, որոնց ջանքերով իրականացաւ այս տօնակատարումը, ան հրաւիրեց Սրբազան հօր՝ որպէսզի միասնաբար յանձնեն գնահատանքի նուէրները՝ օրուայ պարգեատրուողներուն, որոնք տարբեր ձեւերով օգնած եւ նուիրածութեամբ աշխատած են եկեղեցոյ բարելաւման համար:



Մեծ խանդավառութեամբ՝ ներկաներու հետ միաձայն տարեդարձ երգելով՝ ներս բերուեցաւ կարկանդակը, որմէ ետք հրամցուեցաւ անուշեղէնի սեղանը լեցուն համեղ անուշեղէններով:

Երեկոն ւարստեցաւ երբ եկեղեցոյ տարեկան վիճակահանութեան տոմսերը քաշուեցան ու տասը տարբեր արժեքաւոր նուէրներով բախտաւորեցան տասը տարբեր անձեր:

Բարի հիմնադրման 66-րդ եւ Գնման ու օծման 53-րդ տարեդարձներ:

# ԳԱՆԱՏԱՅԻ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ (CONSERVATIVE PARTY) ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԵՐՄԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ.Բ.Ը.Մ. ՍՐԱՅԻՆ ՄԷՋ

Դեկտեմբեր 8-ի կես օրուայ ժամերուն նախաձեռնութեամբ Հ.Բ.Ը.Մ.-եան, ժիրայր եւ էլիզ Տերվիշեան Սրահին մէջ տեղի կ'ունենար առանձնական երեւոյթ մը:

Մոնթրէալահայ գաղութի բազմախառն ներկայացուցիչներու հոյլ մը - ազգային, մամուլ, ղեկավար - ներկայ էին, մասնաւորաբար ծանօթանալու Գանատայի Պահպանողական ընդդիմադիր կուսակցութեան (Conservative Opposition Party) ծրագիրներուն, ապագայ ընտրութիւններու առնչութեամբ:

Այս հանդիպումին ներկայ էին նաեւ Արա Պալեան ատենապետ Ռ.Ա.Կ.-ի, Արթո Մանուկեան Թէքեան Մշակութային Միութենէն եւ Պերճ Գոգորեան՝ «ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթէն:

Որոշեալ ժամուն, անշուշտ յարգանքի պատշաճ ձեւակերպութիւններու եւ ծափողջոյններու ընդմէջէն, ժպտաղէմ ու ինքնավստահ, մուտք կը գործեր կուսակցութեան առաջնորդ Գանատայի խորհրդարանի անդամ, երեսփոխան PIERRE POILIEVRE:

Նախապէս պատրաստուած ու ապահովուած սեղաններու շուրջ ներկաները գրաւեցին իրենց յատկացուած տեղերը. իսկ կեդրոնի սեղանը սահմանուած էր պատուոյ հիւրերուն:



Իր ներկայութեամբ կը պատուէր Գանատայի մէջ Հ.Բ.Ը.Մ.-եան պատուոյ հիւպատոս Տիար Լեւոն Աֆէեան:

Աուր պատշաճի բացման խօսքէ եւ յարգանքի զանազան արտայայտութիւններէ ետք խօսք առաւ Պահպանողական Կուսակցութեան առաջնորդ Գանատայի խորհրդարանի անդամ, երեսփոխան PIERRE POILIEVRE-ը:

Իր կուռ ոճն ու կարողութիւններու վրայ գիտակցող հանգամանքը մեզի կը

տպաւորէր: Դիրահաղորդ ու սահուն նկատողութիւններով մեզի կը ներկայանար փորձառու քաղաքագետի մը դիմագիծով:

Անմիջական Նոր ծրագիրներէն՝ յաւելեալ բնակարաններու շինութեան գաղափարն էր, որ մեզի հրամցուց, բնակարաններ որոնք օգտակար պիտի հանդիսանային երեք ու սահմանափակ հասոյթ ունեցող վարձակալներու: Խօսեցաւ նաեւ Մոնթրէալի այժմեայ դժուարութիւններէն, սակաւաթիւ բժիշկներու ու բուժքոյրերու տագնապի լուծումի մասին:

Պրն. POILIEVRE հիմնուելով վերջերս յայտնուած վիճակագրական (poll) արդիւնքներու՝ հաւանական կը գտնէ, որ իբրեւ Պահպանողական Կուսակցութեան առաջնորդ՝ կազմէ Նոր կառավարութիւն եւ ընտրուի Գանատայի Նոր վարչապետ:

Կ'արժէ ըսել, թէ պրն. POILIEVRE կը ներկայանայ իբրեւ այժմու պրն. Justin Trudeau-ի դէմ՝ ապագայ վարչապետի թեկնածու:

Տրուեցաւ առիթը անհամբեր ներկաներուն իրենց մտահոգութիւնները ուղղելու պատուակալ Հիւրին: Իրենց կեդրոնական մտահոգութիւնը մասնաւորաբար Գանատայի ապագայ քաղաքականութիւնն էր մեր հայրենիքի առնչութեամբ:

Ան վստահեցուց, որ միշտ պաշտպան պիտի կանգնի Հայաստանի՝ Ռամկավարական սկզբունքներու հաւատացող երկրի մը, որ կը գտնուի կովկասեան վտանգաւոր ու թշնամիներով շրջապատուած շրջանի մը մէջ:

Պրն. POILIEVRE ամենայն հանդարտութեամբ պատասխանեց բոլոր հարցումներուն. չկար ո՛չ մէկ ընկրկում ու տատամսում այլ պայծառ ու խորատոյգ հաղորդականութիւն:

Հետաքրքրական հանդիպում մըն էր ու քաջալերելի, թէ՛ հանդիպման գաղափարի եւ թէ՛ կազմակերպչական աշխատանքի դիտանկիւնէ:

Մանաւանդ վերջերս, ակնյայտ է Մոնթրէալահայ հասարակութեան ներակցումը (involvement) Քէպէք Նահանգի Գանատայի քաղաքադաշտին մէջ, ըլլայ համայնքային հետաքրքրութեամբ կամ հայ քաղաքագետներու մասնակցողներու չափանիշով:

Թղթակից

## ԺՈՋԷՑ ՊՈՐԵԼ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՅԱՆՋԷ ՄԵՐ ՎՃՌԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ»

Երկուշաբթի՝ 11 Դեկտեմբեր 2023-ին, Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարներու Նիստի եւ Արեւելեան գործընկերութեան երկիրներու նախարարական հանդիպումի մեկնարկին, Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան բարձրագոյն յանձնակատար Ժոզէֆ Պորելը լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտարարած է՝ թէ Հայաստանի մէջ կացութիւնը ուշադրութիւն եւ աջակցութիւն կը պահանջէ:

Եւրոպական Միութեան բարձրաստիճան պաշտօնատարը անդրադարձած է Արեւելեան գործընկերութեան անդամ երկիրներուն մէջ ստեղծուած կացութեան եւ նշած. «Ամբողջ շրջանը յայտնուած է ծանր կացութեան մէջ»: «Աշխարհի այս հատուածին մէջ շատ բան տեղի ունեցած է: Պիեղոռուսիոյ տեղը դատարկ պիտի ըլլայ: Մենք ամէն ինչ կ'ընենք Լուքսեմբուրգի վարչակարգը մեկուսացնելու եւ ժողովրդավարական ուժերուն աջակցելու համար: Արեւելեան գործընկերութեան ամբողջ շրջանը յայտնուած է ծանր կացութեան մէջ: Ան յաւելած է. «Լաւ նորութիւնն այն է, որ Վրաստանը դէպի Եւրոպական Միութեան անդամակցութիւն կը շարժի, Հայաստանի մէջ

կացութիւնը կը պահանջէ մեր վճռական աջակցութիւնն ու ուշադրութիւնը, թէ ինչպէս կրնանք մեծցնել այդ աջակցութիւնը եւ ինչպէս օրակարգի վրայ պահել Արեւելեան գործընկերութիւնը, որովհետեւ անիկա մեր արեւելեան սահմանն է», ըսած է Պորել:

«Շրջանին մէջ շատ բաներ կը կատարուին: Կարեւոր է շարունակել ուշադրութիւն դարձնել անոնց եւ յատկապէս Հայաստանին, որ շատ բարդ կացութեան մէջ է», յայտնած է ան:

Աւարտին յիշենք, որ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան մասնակցեցաւ Եւրոպական Միութեան Արեւելեան գործընկերութեան արտաքին գործոց նախարարներու մակարդակով ժողովին:



# ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 18 DECEMBRE 2023

## Les dirigeants azerbaïdjanais pourraient transformer le concept d' « Azerbaïdjan occidental » en un prochain Chouchi

Écrit en anglais par *Benyamin Poghosian* et publié dans *The Armenian Mirror-Spectator* en date du 3 décembre 2023

La question la plus posée après la prise de contrôle militaire du Haut-Karabagh par l'Azerbaïdjan est peut-être la suivante : pourquoi n'y a-t-il pas d'accord de paix entre l'Arménie et l'Azerbaïdjan ? Le statut et l'avenir du Haut-Karabagh sont les pierres angulaires du conflit depuis la fin des années 1980. Les positions des parties étaient trop éloignées les unes des autres pour laisser espérer un compromis. Les Arméniens étaient convaincus que le Haut-Karabagh ne pouvait pas faire partie de l'Azerbaïdjan, car ils ne pouvaient pas vivre sous juridiction azerbaïdjanaise. Les Azerbaïdjanais étaient convaincus, eux, que le Haut-Karabagh devait faire partie de l'Azerbaïdjan.

La situation n'a changé qu'en octobre 2022, lorsque le Premier ministre arménien a signé une déclaration à Prague reconnaissant le Haut-Karabagh comme faisant partie de l'Azerbaïdjan. Il semblait que le changement radical de la position de l'Arménie ouvrirait enfin la voie à une normalisation entre l'Arménie et l'Azerbaïdjan. L'Arménie accepterait que le Haut-Karabagh fasse partie de l'Azerbaïdjan, tandis que l'Azerbaïdjan fournirait des garanties de sécurité aux Arméniens du Haut-Karabagh. Cependant, seule la première partie de l'équation était réelle. L'Arménie a reconnu le Haut-Karabagh comme faisant partie de l'Azerbaïdjan et a même abandonné toute demande d'autonomie. De l'autre, l'Azerbaïdjan a imposé un blocus au Haut-Karabagh et a lancé, en septembre 2023, une offensive militaire, obligeant l'ensemble de la population arménienne de la région à quitter son pays.

Néanmoins, alors que plus de cent mille Arméniens entraient en Arménie, de nombreux membres de la communauté internationale espéraient que l'ère de la paix arriverait enfin, et leur logique était claire. La question du Haut-Karabagh et l'avenir des Arméniens constituent les principaux obstacles à la normalisation des relations entre l'Arménie et l'Azerbaïdjan. La République du Haut-Karabagh étant détruite, rien ne pourrait empêcher l'Arménie et l'Azerbaïdjan de signer un accord de paix. Cela ouvrirait alors la voie à une normalisation des relations entre l'Arménie et la Turquie et la géopolitique du Caucase du Sud serait modifiée.

Tout le monde a commencé à parler d'un traité de paix entre l'Arménie et l'Azerbaïdjan d'ici la fin de 2023.

Cela a évoqué un sentiment de déjà vu, car à l'automne 2022, des discussions intenses ont eu lieu sur la possibilité de signer l'accord de paix entre l'Arménie et l'Azerbaïdjan d'ici la fin de 2022. Pourtant, fin septembre 2023, nombreux



étaient ceux qui étaient sûrs que rien ne pourrait cette fois empêcher la paix. Cependant, en octobre-novembre 2023 tout a changé. Début décembre 2023, personne ne parlait plus d'un accord de paix d'ici fin 2023 ; Qui plus est, personne ne savait quand et où les négociations entre l'Arménie et l'Azerbaïdjan pourraient reprendre.

Il règne une confusion en Occident alors que les gens cherchent à comprendre ce qui se passe. En apparence, la raison derrière ces développements est le rejet par l'Azerbaïdjan des plates-formes de négociation occidentales.

Soudainement, l'Azerbaïdjan a compris que l'UE et les États-Unis, en tant qu'acteurs extérieurs, n'apportaient que chaos et instabilité dans le Caucase du Sud. Simultanément, l'Azerbaïdjan laisse entendre que la signature d'un accord de paix à l'occidentale irriterait la Russie et l'Iran et ne souhaite pas aggraver ses relations avec ces États puissants, qui auront une influence significative dans la région dans un avenir proche. L'Azerbaïdjan propose désormais de reprendre les négociations à Moscou ou d'avoir des pourparlers directs, sans aucun médiateur, soit en Géorgie, soit près de la frontière entre l'Arménie et l'Azerbaïdjan.

L'Arménie évite la plateforme russe, car les relations entre l'Arménie et la Russie se détériorent rapidement et l'Arménie ne veut pas de négociations directes. L'Arménie a besoin de garants qui empêcheront toute violation de l'accord de paix par l'Azerbaïdjan.

Toutefois, les différences en matière de localisation ne représentent que la pointe de l'iceberg. La raison principale de l'effondrement soudain du processus de négociation est que l'Azerbaïdjan n'est intéressé par aucun accord de paix avec l'Arménie, même s'il satisfaisait toutes ses exigences en matière d'enclaves et de couloirs. Depuis que le président Aliiev a hérité du pouvoir de son père en 2003, il a utilisé le conflit du Haut-Karabagh, notamment l'idée de la restitution de Chouchi, comme une idée unificatrice afin de rallier la population azerbaïdjanaise autour de lui. La stratégie était simple : il y avait de nombreux problèmes en Azerbaïdjan, depuis d'énormes inégalités et une corruption endémique jusqu'au manque de libertés fonamen-

Suite à la page 6

## L'Assemblée législative d'Argentine condamne l'Azerbaïdjan



L'Assemblée législative de Buenos Aires, Argentine, a adopté une déclaration condamnant les actions de l'Azerbaïdjan contre le Haut-Karabagh arménien. L'Assemblée législative a exprimé sa préoccupation face au déplacement forcé du peuple arménien et aux conditions inhumaines créées contre lui, causées par les actions de l'Azerbaïdjan en violation de la déclaration de cessez-le-feu, le blocus du couloir de Latchine et la reprise des hostilités sur le territoire de Nagorny-Karabagh.

L'Assemblée législative appelle à la sécurité de la population civile et au respect du droit international humanitaire.

## Rencontre entre le Catholicos et l'ambassadeur du Canada



Le Catholicos de tous les Arméniens Karekin II a reçu au Saint-Siège d'Etchmiadzine, le 8 décembre dernier, Andrew Turner, nouvel ambassadeur résident du Canada en Arménie.

Karekin II a félicité l'ambassadeur pour sa nomination et lui a souhaité plein succès dans sa mission diplomatique en Arménie, notant que la création de l'ambassade du Canada en Arménie contribuera à des relations amicales entre les deux pays.

Lors de la réunion, le Catholicos a exprimé son appréciation envers les autorités canadiennes pour la reconnaissance et la condamnation du génocide arménien, ainsi que pour leur soutien envers l'Arménie et le peuple arménien.

Karekin II a réfléchi aux questions de sécurité auxquelles est confrontée l'Arménie, à la protection des droits équitables des Arméniens déplacés d'Artsakh, à la préservation du patrimoine spirituel et culturel arménien de l'Artsakh, exprimant l'espoir qu'avec le soutien actif de la communauté internationale et des pays amis, les Arméniens seront capables de surmonter cette situation difficile.

En outre, le Catholicos a parlé avec satisfaction de l'attitude bienveillante manifestée par les autorités canadiennes envers la communauté arménienne canadienne, notant que cette communauté constitue un pont important pour le renforcement des relations entre les deux pays.

À son tour, l'ambassadeur Andrew Turner, parlant de sa mission diplomatique en Arménie et des perspectives d'approfondissement et de développement de la coopération arméno-canadienne, a exprimé sa volonté de déployer tous les efforts possibles pour surmonter les défis auxquels l'Arménie est confrontée, l'assistance aux Arméniens déplacés de force d'Artsakh et l'instauration de la paix dans la région.

## Le président du Kazakhstan invité en Arménie

Le président arménien Nikol Pachinian a eu un entretien téléphonique avec le Président kazakh Kassym-Jomart Tokayev.

Selon le bureau du Premier ministre arménien, ils auront discuté de l'agenda des relations bilatérales entre l'Arménie et le Kazakhstan.

L'intérêt mutuel dans le développement des relations entre les deux pays, ainsi que la nécessité de réaliser le potentiel de coopération dans les domaines économique et autres, ont été soulignés.

En outre, le Premier ministre Pachinian a invité le président Tokayev en Arménie pour une visite officielle, invitation que le président du Kazakhstan a acceptée.



## Le Conseil de l'Europe contribuera au renforcement de la confiance entre l'Azerbaïdjan et l'Arménie

Le président azerbaïdjanais Ilham Aliev a reçu Marija Pejcinovic Buric, secrétaire générale du Conseil de l'Europe.

Madame Pejcinovic Buric a noté que l'Azerbaïdjan était un membre apprécié du Conseil de l'Europe depuis 2001. Elle a rappelé que l'Azerbaïdjan avait signé et ratifié de nombreuses conventions du Conseil de l'Europe.

Saluant les mesures prises par l'Azerbaïdjan pour assurer une paix durable dans la région, la cheffe du Conseil de l'Europe a salué la déclaration conjointe adoptée par l'administration présidentielle de l'Azerbaïdjan et le bureau du Premier ministre arménien et les questions qui en découlent, en particulier les mesures liées au renforcement de la confiance entre les deux pays. Elle a exprimé la volonté du Conseil de l'Europe de contribuer aux mesures de confiance entre l'Azerbaïdjan et l'Arménie.

Le président Aliev a souligné que la déclaration commune était une démonstration de la volonté politique mutuelle de faire avancer le programme de paix et de normaliser les relations entre les deux pays. Le chef de l'État azerbaïdjanais a souligné que le Conseil de l'Europe constituait également une très bonne plate-forme pour promouvoir le processus de renforcement de la confiance entre les deux pays.

Au cours de l'entretien, ils ont mis l'accent sur la nécessité d'un dialogue et de relations constructifs entre les délégations parlementaires de l'Azerbaïdjan et de l'Arménie à l'Assemblée parlementaire du Conseil de l'Europe (APCE).



## Les États-Unis doivent aider l'Arménie en matière de sécurité

Frank Pallone, membre de la Chambre des représentants des États-Unis et coprésident du groupe arménien au Congrès, a considéré l'accord conclu entre les dirigeants arméniens et azerbaïdjanais sur la libération des détenus comme un pas en avant.

Pallone a écrit sur X qu'il était heureux de voir que l'Arménie et l'Azerbaïdjan étaient parvenus à un accord sur la libération de 32 captifs arméniens. Il a ajouté qu'il s'agit d'un pas en avant important, mais que les États-Unis doivent aider l'Arménie dans le secteur de la sécurité afin d'assurer une paix durable dans le Caucase.



## Les...

Suite de la page 5

tales. Cependant, il a été demandé à la société de les oublier et de se rallier au leader qui a promis de hisser le drapeau azerbaïdjanais à Chouchi. Cette promesse semblait être un fantasme en 2003, mais la majeure partie de la société a accepté cet accord.

Puis, 17 ans plus tard, les troupes azerbaïdjanaises sont entrées dans Chouchi. Ils y ont hissé un drapeau et, en 2023, tous les Arméniens ont été contraints de quitter le Haut-Karabagh. Le président Ilham Aliev a reçu un défilé militaire à Stepanakert à l'occasion du 20e anniversaire de sa première élection à la présidence. Le président Aliev semble avoir tenu ses promesses et sera perçu à jamais comme un héros national, assurant ainsi sa position et celle de sa famille en tant que dirigeants de l'Azerbaïdjan durant des décennies.

Cependant, comme toujours, il existe deux faces à la médaille. Beaucoup, sinon tous, en Azerbaïdjan perçoivent le président Aliev comme un héros national. Cependant, une fois l'accord de 2003 conclu, tôt ou tard, les gens commenceront à se poser des questions sur les inégalités, la corruption endémique, le manque de libertés fondamentales et d'autres problèmes qui ravagent l'Azerbaïdjan.

Pour empêcher cette évolution, le président Aliev a besoin d'une nouvelle idée unificatrice qui rallierait la population derrière lui, comme l'a fait l'idée de hisser le drapeau azerbaïdjanais à Chouchi en 2003, et qui obligerait la société azerbaïdjanaise à tolérer les problèmes multiformes de l'Azerbaïdjan actuel. Les dirigeants azerbaïdjanais ont décidé que la nouvelle idée serait la vision d'un « Azerbaïdjan occidental ». Actuellement, l'idée manque de clarté : cela implique-t-il de hisser des drapeaux azerbaïdjanais dans les villes arméniennes, y compris à Erévan, ou envisage-t-il le « retour pacifique des Azerbaïdjanais en Arménie », où ils vivront en tant que citoyens arméniens ?

Cependant, malgré le manque de clarté sur les détails, le grand projet est là : la société azerbaïdjanaise devrait se rallier au président Aliev et à sa famille au cours des 20 prochaines années pour réaliser un autre rêve national, comme elle l'a fait en 2003 et a réalisé son rêve d'avoir des drapeaux azerbaïdjanais à Chouchi et dans d'autres villes du Haut-Karabagh. De plus, dans ce contexte, l'accord de paix avec l'Arménie ne fera qu'entraver le processus.

Même le meilleur accord de paix donnerait à l'Azerbaïdjan de soi-disant enclaves, établirait un accès terrestre direct avec elles, créerait le « corridor de Zangezour » et tuerait « le rêve d'un Azerbaïdjan occidental ». Ainsi, l'Azerbaïdjan, ou du moins ses dirigeants actuels, n'a pas besoin d'un accord de paix avec l'Arménie ; plus encore, un accord de paix avec l'Arménie pourrait créer d'importants problèmes au cours des 20 prochaines années.

Traduction N.P.

## La Russie salue la déclaration commune de l'Azerbaïdjan et de l'Arménie sur le traité de paix

La Russie a accueilli avec satisfaction la déclaration conjointe du bureau du Premier ministre arménien et de l'administration présidentielle azerbaïdjanaise confirmant leur intention mutuelle de normaliser les relations et de signer un traité de paix entre les deux pays. C'est ce qu'a déclaré Maria Zakharova, représentante officielle du ministère russe des Affaires étrangères (MAE).

